



Ախուրյանի թիվ 1 միջնակարգ դպրոցի տնօրեն Աննա Ենգոյանին  
Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ԶԿ նախագահ Նադեժդա Հակոբյանից  
Հասցե. Հայաստան, 3102, Գյումրի, Պուշկինի փ., 96

### **ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ-1**

**Թվագրված՝ 19 մայիսի 2009**

Տիկին Ենգոյան,

Առաջնորդվելով ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով, խնդրում եմ ինձ տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ախուրյանի թիվ 1 միջնակարգ դպրոցի 2008 թվականի բյուջեն եւ բյուջեի կատարողականը արտացոլող փաստաթղթերի լուսապատճենները:
2. Ախուրյանի թիվ 1 միջնակարգ դպրոցի խորհրդի կազմը: Խնդրում եմ այս տեղեկության մեջ հիշատակել, թե խորհրդի անդամներից յուրաքանչյուրը ո՞ր մարմնից է պատվիրակված (Մանկավարժական խորհրդից, Ծնողական խորհրդից, Շիրակի մարզպետարանից եւ համայնքապետարանից):
3. 2008 թվականի հունվարի 1-ից մինչ այս հարցումն ստանալու օրը, Ախուրյանի թիվ 1 միջնակարգ դպրոցի Մանկավարժական խորհրդի գումարած նիստերի արձանագրությունների լուսապատճենները:
4. Ախուրյանի թիվ 1 միջնակարգ դպրոցի Ծնողական խորհրդի նախագահի անուն-ազգանունը:
5. Ախուրյանի թիվ 1 միջնակարգ դպրոցի աշակերտների թիվը 2008 թվի հունվարի 1-ի դրությամբ:
6. Ախուրյանի թիվ 1 միջնակարգ դպրոցի աշակերտների թիվը 2009 թվի հունվարի 1-ի դրությամբ:
7. Ինչ նախասիրական դասընթացներ են անցկացվել Ախուրյանի թիվ 1 միջնակարգ դպրոցում 2009 թվի հունվարի 12-ի դրությամբ, որքա՞ն է կազմել մեկ աշակերտից այդ դասընթաց(ներ)ին մասնակցելու ամսական վճարը, քանի՞ աշակերտ է մասնակցել այդ դասընթացներից յուրաքանչյուրին 2009 թվի հունվարի 12-ի դրությամբ:

Պատրաստ եմ հոգալ հարցված տեղեկությունների պատճենման հետ կապված բոլոր ծախսերը: Նպատակահարմարության դեպքում, խնդրում եմ ինձ հաղորդել Ձեր ղեկավարած հաստատության բանկային հաշվեհամարը եւ վերոհիշյալ նյութերի պատճենման ծախսաչափը:

Տեղեկություններ հարցնող՝

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ԶԿ նախագահ

Նադեժդա Հակոբյան \_\_\_\_\_

